

Ղամբարյան Արթուր

Սահմանադրական կարգը տապալելը
(իրավական դոգմատիկայից դեպի իրավաքաղաքական ռեալիզմ)

Երևան 2020

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ և 300.1-րդ հոդվածների կիրառման պրակտիկան
- 1.2. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի դոկտրինայ մեկնաբանությունը
- 1.3. ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու իրավական և քաղաքական շարժառիթները

2. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի որոշակիության վիճակը

2.1. ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 18.03.2009 թ. փոփոխությունը՝ իրավական որոշակիության ապահովման նպատակով. (իրականացում, թե՞ ձախողում)

2.2. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի անորոշության պատճառները

2.2.1 Ընդհանուր նկատառումներ

2.2.2. Սահմանադրական կարգի տապալման «նպատակը» և եղանակը

- (a) Սահմանադրական կարգի տապալման առանձնացումը իշխանությունը յուրացնելու կոնտեքստից
- (b) Սահմանադրական կարգի տապալման եղանակի ընդլայնումը

2.2.3. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով նախատեսված բլանկետային դիսպոզիցիայի կիրառությունը 2015թ. Սահմանադրական փոփոխությունից հետո

- (a) Ընդհանուր նկատառումներ
- (b) 2015թ. ՀՀ Սահմանադրությունից հետո ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի մասնակի ապաքրեականացումը
- (c) Արարքի կատարման պահին գործող, սակայն մեղադրանք առաջադրելու ժամանակ չգործող Սահմանադրության վկայակոչումը

3. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի հետադարձ ուժի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը և «Venire contra factum proprium» սկզբունքը

3.1. Պետության նկատմամբ վստահության պաշտպանության սահմանադրական սկզբունքը

3.2. Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի հետադարձ ուժի վերաբերյալ

3.2.1. ՀՀ ազգային ժողովի (պատգամավորների) դիրքորոշումը

3.2.2. Ընդդիմադիր պատգամավորի կանխատեսումը և ճակատագրի հեզնանքը

3.2.3. ՀՀ դատախազության դիրքորոշումը և դրա փոփոխությունը

4. Եզրահանգումներ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ և 300.1-րդ հոդվածների կիրառման պրակտիկան

ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի և 300.1-րդ հոդվածները, իրենց բնույթով պայմանավորված, քիչ կիրառվող դրույթներ են: «Դատալեքս» որոնողական համակարգի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ այս հոդվածներով դատավճիռներ չեն կայացվել:

Այս հոդվածով դատարան է ուղարկվել երկու քրեական գործ, որոնք վերաբերել են 2008թ. մարտի 1-2 դեպքերին:

1) ՀՀ դատախազությունը 01.12.2008թ. դատարան էր ուղարկել Մարտի 1-2-ին Երևան քաղաքում տեղի ունեցած զանգվածային անկարգությունների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործով 7 մեղադրյալների¹ (այն հայտնի է «7-ի գործ» անվամբ) վերաբերյալ քրեական գործը, որոնց ի թիվ այլ հոդվածների, մեղադրանք էր առաջադրվել ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածով²: Այս գործով դատախազները 2009թ. մարտի 31-ի որոշմամբ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումից հրաժարվել են, և դատարանը ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի մասով արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցրել է (այս մասին հաջորդիվ):

2) Ներկայումս ՀՀ դատարանների վարույթում ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածով գտնվում է մեկ գործ (ՀՀ երկրորդ նախագահ Ռ. Քոչարյանի և այլոց վերաբերյալ քրեական գործը)³:

Թեև ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ դատարանները դատավճիռներ չեն կայացրել, սակայն վերջին մեկ ու կես տարիների ընթացքում տարբեր անձինք ՀՀ դատախազություն կամ ՀՀ հատուկ քննչական ծառայություն ներկայացրել են ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածով նախատեսված հանցագործության մասին հաղորդումներ: Այսպես ՁԼՄ-ի ուսումնասիրությունից պարզվել է սահմանադրական կարգը տապալելու վերաբերյալ հաղորդումների հետևյալ դեպքերը՝

1) քաղաքական գործից Ա. Հարությունյանը ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրել է հանցագործության մասին հաղորդում կապված 1996թ. նախագահական ընտրությունների արդյունքները կեղծելու, ընտրություններից հետո սահմանադրական կարգը տապալելու, ինչպես նաև նրա նկատմամբ առանձնապես դաժանությամբ բռնություն կիրառելու և նրան խոշտանգելու վերաբերյալ քրեական գործ հարուցելու և մեղավորներին պատասխանատվության ենթարկելու խնդրանքով⁴:

2) փաստաբան Լուսինե Ավագյանը 2019թ. մայիսի 20-ին դատարանների մուտքերն արգելափակելուն ուղղված գործողությունների վերաբերյալ հաղորդում է ներկայացրել սահմանադրական կարգի տապալման հանցագործության մասին⁵:

3) քաղաքացի Ն. Թադևոսյանը 10.04.2019թ. հաղորդում է ներկայացրել այն մասին, որ ՀՀ ճանապարհային ոստիկանության ծառայության պետը 05.12.2016թ. թիվ 301-Ա հրաման ընդունելով տապալել է սահմանադրական կարգը, քանի որ նա իրավասու չէր սահմանելու շարժական տեսաձայնագրման կրելու նորմատիվ բնույթի կարգ, ուստի նա առերևույթ փաստացի վերացրել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասը (պաշտոնատար անձը կարող է կատարել օրենքով լիազորված գործողություններ):

Մեզ չհաջողվեց պարզել մի դեպք, երբ սահմանադրական կարգը տապալելու հաղորդումների վերաբերյալ ՀՀ դատախազությունը կամ այլ իրավասու մարմինները հարուցել են քրեական գործեր և իրականացրել են նախաքննություն:

1.2. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի դոկտրինալ մեկնաբանությունը

ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի վերաբերյալ բացակայում է դոկտրինալ որևէ համալիր վերլուծություն կամ մեկնաբանությունը, որը կպարզաբաներ նոր հանցակազմի էությունը, դրա

¹Մեղադրյալներ Ա. Արզումանյանին, Հ. Հակոբյանին, Գ. Ոսկերչյանին, Ս. Սիրունյանին, Շ. Հարությունյանին մեղադրանքներ են առաջադրվել ՀՀ ՔՕ 225-րդ հոդվածի 3-րդ և 300-րդ հոդվածի 1-ին մասերով, Մյասնիկ Մալխասյանին՝ ՀՀ ՔՕ 225-րդ հոդվածի 3-րդ, 300-րդ հոդվածի 1-ին մասերով և 38-316-րդ հոդվածի 2-րդ մասով, Ս. Միքայելյանին՝ ՀՀ ՔՕ 225-րդ հոդվածի 3-րդ, 300-րդ հոդվածի 1-ին և 235-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով:

²<http://www.prosecutor.am/am/am/3613/>

³<http://www.datalex.am/?app=AppCaseSearch&page=default&tab=criminal>

⁴<https://zham.am/am/news/3092/view>

⁵<https://hetq.am/hy/article/103929>

նպատակը, «սահմանադրական նորմը փաստացի վերացնել» և «իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցում» հասկացությունների քրեաիրավական բովանդակությունը և այլն⁶:

Ի տարբերություն ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի (մինչև 2009թ. խմբագրությունը), ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածն էապես տարբերվում է նաև ՌԴ ՔՕ կարգավորումից, ուստի այս հանցակազմի հատկանիշները մեկնաբանելու հարցում մեզ չի օգնի նաև ռուսական և ԱՊՀ երկրների քրեական իրավունքի դոկտրինը:

ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի վերաբերյալ դոկտրինալ մեկնաբանությունների և իրավակիրառ պրակտիկայի բացակայությունը սահմանափակում է այս հանցակազմի էությունը հասկանալու և ճիշտ կիրառելու հնարավորությունը:

1.3. ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու իրավական և քաղաքական շարժառիթները

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման հիմնավորման մեջ նշված է.

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայով սահմանաված չափանիշները քրեական օրենսգրքին համապատասխանեցնելու և քրեական օրենսգրքին իրավական որոշակիություն հաղորդելու պայմանով⁷:

Ինչպես նկատում ենք, Նախագծի հիմնավորումը բավական մակերեսային է, որից կարելի է միայն ենթադրել, որ այս փոփոխության *իրավական շարժառիթը* իրավական որոշակիության ապահովումն է:

Կարծում եմ, որ օրենսդրական այս փոփոխությունների շարժառիթները պետք է դիտարկել *իրավաքաղաքական ռեալիզմի հարթությունում*: Այս նպատակով, ստորև կներկայացվեն ՀՀ ազգային ժողովում Նախագծի հեղինակների հիմնավորումները:

Այսպես՝ ՀՀ ազգային ժողովի 4-րդ գումարման 5-րդ նստաշրջանի 25 փետրվարի 2009թ. թիվ 110 արձանագրության սղագրությունից ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու նախագծի քննարկումների ընթացքում ՀՀ ազգային ժողովի ընդդիմադիր պատգամավոր Չ. Փոստանջյանը Նախագծի զեկուցողներին տվել է հետևյալ հարցը.

«Պրն Շահբազյան, ես կցանկանայի լսել ձեր կարծիքը՝ վերջիվերջո, այս փոփոխությունները կապ ունե՞ն «7-ի գործը» հետ և, սա Եվրախորհրդի առջև ստանձնած պարտավորությունների շրջանակում է այս օրենքի նախագծի փոփոխությունների առաջարկը»:

Այս հարցի վերաբերյալ ՀՀ ազգային ժողովի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Շահբազյանը նշել է.

«Կարծում եմ, գաղտնիք չկա: Որ է մեկը չի թաքցրել, որ փոփոխությունների առիթը եղել է «7-ի» գործը: Որովհետև եթե չլիներ «7-ի գործը», դժվար թե այսօր այդ անհրաժեշտությունն առաջանար փոփոխելու, թեև փոփոխության կարիք ունեին այս հոդվածները: Այստեղ, կարծում եմ, գաղտնիք չկա, մանավանդ խնդիրը քննարկվել է նաև այնտեղ, և՛, այո՛, ԱԾ նախագահը Եվրախորհրդի խորհրդարանական ժողովի ներկայացուցիչներին այս խոստումը տվել էր կամ այս մասին տեղյակ էր պահել: Մա էլ գաղտնիք չէ, մամուլն է գրել այս մասին: Այնպես որ, չեմ կարծում, թե այստեղ գաղտնիք կա ... Այո՛, մենք համարել ենք, այսինքն՝ ճիշտ է գտնվել, որ հատկապես, երբ այս գործը կա, «7-ի գործը» կա, այդ գործի համար հոդվածները հստակեցնել, որպեսզի վերանա այն մտահոգությունը, որ հոդվածները հակասականություն ունեն, որ

⁶Երևանի պետական համալսարանի և Հայ-ռուսական համալսարանի մասնագետների կողմից գրվել է քրեական իրավունքի երկու դասագիրք, որոնցում ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածին նվիրված է ընդամենը կես էջ, որտեղ հեղինակները պարզապես բացել են ՀՀ Սահմանադրության 1-ից 6-րդ հոդվածների վերնագրերը: Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, Երևանի պետական համալսարան, 6-րդ հրատ., Երևան, 2012թ. էջ 765, Уголовное право Армении и России. Общая и Особенная части / Отв. ред. С.С. Аветисян, А.И. Чучаев. М.: КОНТРАКТ, 2014.С. 650: Մեկ հոդված գրվել է մագիստրոսի կողմից, որտեղ առավելապես կիրառվել է իրավահամեմատական մեթոդը: Տե՛ս Ա. Չեխալյան Ն. «Սահմանադրական կարգը տապալելը»՝ ՀՀ քրեական օրենսգրքում: Օրինականություն, թիվ 108, 2018թ. էջեր 53-59:

⁷<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=3347&Reading=0>

հողվածներն իրենց մեջ տարբեր հանցակազմեր են պարունակում, որ նաև դրանք իրենց մեջ քաղաքական ենթատեքստ կարող են պարունակել: Այստեղ, կարծում եմ, այդ , հենց ԱԺ նախագահն է, որ այս մասին խոսել է Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի ներկայացուցիչների հետ, որն է գատնիք չկա»⁸:

Այս սղագրության ուսումնասիրությունից ինձ մոտ ստեղծվում է այն համոզմունքը, որ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու հիմնական պատճառը 2008թ. մարտի մեկի դեպքերով «7-ի գործով» մեղադրյալների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու նյութա-իրավական հիմքեր ստեղծելն էր, ինչն ապացուցվում է նաև օրենքի փոփոխությունից հետո «7-ի գործով» մեղադրյալների նկատմամբ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի մասով մեղադրանքից հրաժարվելու և քրեական հետապնդումը դադարեցնելու փաստով:

2. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի որոշակիության վիճակը

2.1. ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 18.03.2009 թ. փոփոխությունը՝ իրավական որոշակիության ապահովման նպատակով. (իրականացում, թե՛ ձախողում)

Ըստ Նախագծի հիմնավորման՝ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխության իրավական շարժառիթը իրավական որոշակիության ապահովումն էր: ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածն ըստ էության մասնատվել է և սահմանադրական կարգի տապալումը դուրս է բերվել պետական իշխանությունը յուրացնելու դիսպոզիցիայից և ձևակերպվել է որպես ինքնուրույն հանցագործություն (1), իսկ հանցագործության կատարման եղանակ է համարվել ոչ միայն բռնությունը, այլև ոչ բռնի եղանակը (2): Ընդ որում, օրենսդրական այս փոփոխությունները կարող են ողջամտորեն հիմք տալ կարծելու, որ օրենսդիրը նպատակ է ունեցել նախատեսել որակապես նոր հանցակազմ:

Կարծում եմ, որ այս երկուսն այն հիմնական գործոններն են, որոնք ստեղծում են ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի իրավական անորոշության առավել բարձր աստիճան (այս մասին հաջորդիվ):

Ավելին, դեռևս Նախագծի քննարկման ժամանակ առանձին պատգամավորներ նշել են, որ Նախագծով չի լուծվել իրավական որոշակիության ապահովման հարցը:

2.2. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի անորոշության պատճառները

2.2.1 Ընդհանուր նկատառումներ: ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի (Նախագծի) անորոշության մասին խոսվել է դեռևս ՀՀ ազգային ժողովի 2009թ. փետրվարի 25-ի նիստի ժամանակ: ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Ա. Մինասյանը (իրավաբան) իր ելույթում նշել է.

«Եթե մենք նայում ենք Սահմանադրության 1 և 2 հոդվածներին, որը սահմանադրական կարգի տապալման նախագծի 300.1 հոդվածով է առաջադրվում, և եթե նայում ենք սահմանադրական կարգի տապալման այս 2 կետերը, ըստ էության, սա նորից տարածական մեկնաբանության տեղիք է տալիս: Պատկերացրեք մի իրավիճակ, երբ, օրինակ, ընտրությունները կեղծվել, որը ժողովրդավարական հասարակարգ կառուցող երկրների համար ամենահիմնական գործիքն է, դրանք նույնպես, ըստ էության, պետք է համարվեն սահմանադրական կարգի տապալման, առնվազն, փորձ: Կամ, եթե մենք վերցնում ենք Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածները և ասում ենք, այս 300.1-ով փաստացի վերացնել է, դա՛ է սահմանադրական կարգի տապալումը, այդ դեպքում ցանկացած անձ, ով որևէ քայլ է անում իրավական պետության դեմ կամ սոցիալական պետության դեմ, դա կդիտվի որպես սահմանադրական կարգի տապալման, առնվազն, փորձ: Այսինքն՝ այն հիմնական խնդիրը, որ դրված էր, այն է՝ իրավական որոշակիության ապահովում, ես կարծում եմ, բավարար չափով իրացված չէ այստեղ»⁹:

Չեմ կհետև այն կարծիքը, երբ ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի իրավական անորոշությունը փորձում են բացատրել կամ հիմնավորել բացառապես (per se) սահմանադրական կարգի նորմերի ընդհանրական (վերացական) լինելու հանգամանքով: Սահմանադրական (պետական, հասարակական, հանրային) կարգի հիմունքները իրենց բնույթով վերացարկման բարձր աստիճան ունեցող նորմեր են, ուստի քրեական օրենքի հոդվածներում դրանց վրա հղումները

⁸ՀՀ ազգային ժողովի 4-րդ գումարման 5-րդ նստաշրջանի 2009թ. փետրվարի 25թիվ 110 արձանագրության սղագրություն: <http://parliament.am/transcript.php?AgendaID=1812&day=25&month=02&year=2009&lang=arm#25.02.2009>

⁹ՀՀ ազգային ժողովի 4-րդ գումարման 5-րդ նստաշրջանի 2009թ. փետրվարի 25թիվ 110 արձանագրության սղագրություն: <http://parliament.am/transcript.php?AgendaID=1812&day=25&month=02&year=2009&lang=arm#25.02.2009>

per se (ինքնին) չեն կարող հանդիսանալ իրավական անորոշության պատճառ: Սահմանադրական կարգի հիմունքների պաշտպանության քրեաիրավական նորմերի որոշակիությունը պետք է դիտարկել հանցագործության օբյեկտիվ և սուբյեկտիվ տարրերի, մասնավորապես կատարման նպատակի, կատարման եղանակի, համակցության մեջ:

Ինչպես նշվեց, ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի անորոշության հիմնական պատճառն այս հանցակազմի «իշխանության յուրացման նպատակի» վերացումն է և կատարման եղանակի ընդլայնումը¹⁰:

2.2.2. Սահմանադրական կարգի տապալման «նպատակը» և եղանակը

(a) *Սահմանադրական կարգի տապալման առանձնացումը իշխանությունը յուրացնելու կոնտեքստից:* ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածով իմաստով (մինչև 2009թ. փոփոխությունը) պետական իշխանության յուրացումը կարող էր կատարվել այնպիսի գործողությամբ, որն ուղղված էր ՀՀ սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն: Այս հանցակազմի գործողության շրջանակից դուրս էին ՀՀ սահմանադրական կարգի դեմ ուղղված այն ոսնձգությունները, որոնք իրենց էությամբ չէին կարող հանդիսանալ պետական իշխանության յուրացում: Օրինակ՝ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի իմաստով սահմանադրական կարգը տապալելու եղանակով պետական իշխանության զավթում չէր համարվի 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 1-ին գլխում (սահմանադրական կարգի հիմունքներ) 8-րդ հոդված նախատեսված սեփականության իրավունքի պաշտպանության դեմ ուղղված գործողությունները¹¹:

Հետխորհրդային պետությունների քրեական իրավունքի դոկտրինում ընդունված է այն մոտեցումը, որ սահմանադրական կարգի տապալման գործողություններն առավելապես ուղղված են կամ պետական իշխանության բարձրագույն մարմինների ձևավորման, նրանց լիազորությունների բռնի փոփոխման¹² կամ Սահմանադրության դրույթները բռնությամբ վերացնելու և պետական իշխանության նոր համակարգ ստեղծելու հետ¹³: Ընդ որում՝ այս ոլորտում մասնագիտացված առանձին քրեագետներ կարծում են, որ սահմանադրական կարգի բռնի տապալումը **իշխանությունը յուրացնելու փուլերից մեկն է**, երբ պետական իշխանությունը զավթելուն կամ այն պահելուց հետո ձևավորվում է պետական իշխանության նոր համակարգ և փոխվում է սահմանադրական կարգը՝ փոխվում է պետական իշխանության կառուցվածքը, վերացվում են իշխանության ինստիտուտներ, ներմուծվում է սահմանափակ ժողովրդավարական ակունքներ ունեցող պետական կառավարման նոր համակարգ, բռնի կերպով ընդունվում է մարդու իրավունքների էական ձևախեղումներով նոր սահմանադրություն¹⁴:

Սահմանադրական կարգը տապալելու արարքը իշխանությունը յուրացնելու կոնտեքստից առանձնացնելը ստեղծում է այս հոդվածի ընկալման և կիրառության վերաբերյալ որոշակիության սուր դեֆիցիտ: Ասվածն ապացուցվում է ՀՀ-ում առկա իրավակիրառ պրակտիկայով: Սույն եզրակացության առաջին բաժնում նշվեց, որ թեև քաղաքացիների կողմից ներկայացվել են սահմանադրական կարգը տապալելու մասին հաղորդումներ, սակայն ՀՀ իրավապահ մարմինները դրանց վերաբերյալ քրեական գործեր չեն հարուցել և քննություն չեն կատարել (ըստ մեր տեղեկությունների): Իսկ առանձին հաղորդումներ նույնիսկ

¹⁰ Քրեաիրավական նորմերի անորոշությունը էապես սահմանափակում է նաև մեղադրյալի պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունը:

¹¹ Ընդ որում, հայկական քրեական իրավունքի դոկտրինում նույնպես ընդունված էր այն մոտեցումը, որ պետական իշխանության յուրացումն ուղղված էր ՀՀ Սահմանադրական կարգի այն հիմունքների դեմ, որոնցով ամրագրված են պետական իշխանության կազմավորման և գործունեության սկզբունքները: Տե՛ս ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս, Երևանի պետական համալսարան, Երևան, 2004թ. էջ 722:

¹² Уголовное право. Особенная часть учебник / отв. ред. И. Я. Козаченко, Г. П. Новоселов. 4-е изд., изм. и доп. М.: Норма, 2008. С. 763.

¹³ Курс уголовного права. Учебник. Т. 5. Под ред.: Кузнецов Н. Ф., Комиссаров В. С., М.: Зерцало, 2002. С.32.

¹⁴ Дьяков С. В. Преступления против основ конституционного строя и безопасности государства. 2-е изд., испр. и доп. СПб.: Изд. «Юридический центр-Пресс», 2012. С. 96.

չեն դիտվել որպես քրեական գործ հարուցելու առիթ (քրեական վարույթ նախաձեռնելու առիթ):

Այսպիսով՝ սահմանադրական կարգի տապալումը պետական իշխանությունը յուրացնելու հանցակազմի կոնտեքստից կտրելով՝ էապես ձևափոխվում է այս արարքի էությունը, որի պայմաններում խիստ դժվարանում է կողմնորոշվել Սահմանադրության 1-ից 6-րդ հոդվածների այս կամ այն խախտումը սահմանադրական կարգի տապալում է, թե ոչ:

(b) Սահմանադրական կարգի տապալման եղանակի ընդլայնումը: Սահմանադրական կարգը տապալելու արարքի էությունը էապես ձևափոխվում է ոչ միայն այն պետական իշխանությունը յուրացնելու հանցակազմի կոնտեքստից կտրելով, այլև կատարման եղանակն ընդլայնելով (բռնի և ոչ բռնի եղանակով կատարելը)¹⁵: Բռնությունը՝ որպես սահմանադրական կարգը տապալելու եղանակ վերացնելով, ըստ էության այս հանցակազմի գործողության ոլորտն ընդլայնվում է այն աստիճանի, որ դժվար է որոշել դրա և պաշտոնական մի շարք այլ հանցագործությունների տարանջատման սահմանագիծը: Օրինակ՝ դժվար է միանշանակ քննարկել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի՝ իրավական համակարգում գործողության դադարեցման (ՀՀ քր. օր-ի 300.1-րդ հոդված) և պաշտոնատար անձի լիազորությունների անցման (ՀՀ քր. օր-ի 309-րդ հոդված) հանցակազմերի տարանջատման հարցերը¹⁶:

Ավելին, առանց բռնության սահմանադրական կարգը տապալելու (ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի մասով) հանցակազմը դժվար լուծելի մրցակության մեջ է մտնում ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի նոր խմբագրության՝ «Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության կամ սահմանադրական դատարանի լիազորություններին տիրանալը...» հանցակազմի հետ: Օրինակ՝ Նախագահը իր հրամանագրով Սահմանադրության մեջ փոփոխություն է կատարում (Սահմանադրությամբ չնախատեսված եղանակ) այն մասին, որ Սահմանադրական դատարանը վերացվում է և դրա փոխարեն Նախագահին կից ստեղծվում է Սահմանադրական խորհուրդ: Հարց է ծագում՝ այս դեպքում գործ ունենք Սահմանադրությամբ չնախատեսված եղանակով Սահմանադրական դատարանի լիազորություններին տիրանալու (ՀՀ ՔՕ 300-րդ հոդված), թե ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի (իշխանության բաժանման սկզբունքի) փաստացի դադարեցման եղանակով սահմանադրական կարգը տապալելու (ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդված) հետ: Նույնիսկ տեսականորեն դժվար լուծվող այս հարցադրումները գործնականում կարող են ստեղծել անորոշ վիճակներ:

2.2.3. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածով նախատեսված բլանկետային դիսպոզիցիայի կիրառությունը 2015թ. Սահմանադրական փոփոխությունից հետո

(a) Ընդհանուր նկատառումներ: ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածում ամրագրված է բլանկետային դիսպոզիցիա, քանի որ այն հղում է կատարում ՀՀ Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածի և 6-րդ հոդվածի 1-ին մասերի վրա: Ընդ որում, իրավական տեխնիկայի տեսանկյունից ՀՀ ՔՕ 300.1-

¹⁵ Ետխորհրդային պետությունների ՔՕ-ում բռնությունը հանդիսանում է սահմանադրական կարգը տապալելու հանցակազմի պարտադիր հատկանիշ, օրինակ՝ Ուկրաինայի Հանրապետության ՔՕ 109-րդ հոդված (https://online.zakon.kz/Document/?doc_id=30418109#pos=6;-155), Ղազախստանի ՔՕ 179-րդ հոդված (https://online.zakon.kz/m/Document/?doc_id=31575252), Ղրղզստանի ՔՕ 309-րդ հոդված (<http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/111527>), Մոլդովայի Հանրապետության ՔՕ 339-րդ հոդված (https://online.zakon.kz/Document/?doc_id=30394923#pos=378;-155), Տաջիկստանի Հանրապետության ՔՕ 306-րդ հոդված (https://online.zakon.kz/Document/?doc_id=30397325#pos=8;-155), Թուրքմենստանի Հանրապետության ՔՕ 174.1-րդ հոդված (https://online.zakon.kz/Document/?doc_id=31295286):

¹⁶ Օրինակ՝ իմ վստահորդ Ն. Թադևոսյանը հանցագործության մասին հաղորդում էր տվել ըստ որի՝ ՀՀ Ճանապարհային ոստիկանության պետը, համապատասխան լիազորության բացակայության պայմաններում ոստիկանների կողմից շարժական տեսաձայնագրման սարքեր կրելու վերաբերյալ հրաման ընդունելով փաստացի դադարեցնելու ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի գործողությունը և այդ եղանակով տապալելու սահմանադրական կարգը: ՀՀ դատարանները և իրավապահ մարմինները դեռևս հրաժարվում են այդ առիթով նույնիսկ նախաձեռնել քրեական վարույթ:

րդ հողվածն ունի sui generis շարադրանք և էապես տարբերվում է բլանկետային դիսպոզիցիաների կառուցման ավանդական տեխնիկայից¹⁷: Բանն այն է, որ բլանկետային դիսպոզիցիաները ձևակերպելիս սովորաբար հղում է կատարվում իրավունքի այլ ճյուղերի համապատասխան ոլորտը կարգավորող կանոնների (նորմերի) կամ առանձին օրենքների վրա՝ առանց հստակեցնելու այդ կանոններն ամրագրող հողվածները: Նման տեխնիկան հնարավորություն է տալիս ապահովել քրեական օրենքի կայունությունը և իրավունքի այլ ճյուղերից քրեական իրավունքի ինքնավարությունը: Օրենսդրության այլ ճյուղերում փոփոխություններ կատարելու դեպքում քրեական օրենքի բլանկետային դիսպոզիցիաներում, որպես կանոն, փոփոխություն կատարելու կարիք չի առաջանում:

2009թ. ՀՀ ՔՕ 300.1-րդ հողվածի բլանկետային դիսպոզիցիան շարադրելիս օրենսդիրը հղում է կատարել ոչ թե սահմանադրական համապատասխան **նորմերին (կանոններին)**, այլ դրանք ամրագրող **հողվածներին**: Բլանկետային դիսպոզիցիայի (ՀՀ ՔՕ 300.1-րդ հողվածի) sui generis շարադրման դեպքում քրեաիրավական նորմի գործողությունը վճռորոշ չափով կախվածության մեջ է դրվել հղումում նշված հողվածի ոչ միայն բովանդակությունից, այլև ձևի փոփոխությունից:

(b) 2015թ. ՀՀ Սահմանադրությունից հետո ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հողվածի մասնակի ապաքրեականացումը: Հայտնի, որ ՀՀ ՔՕ 300.1-րդ հողվածում հիշատակվում են 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության հողվածները, իսկ այդ խմբագրությամբ Սահմանադրությունը 2015թ-ին դադարել է գործել (բացառությամբ՝ Սահմանադրության 1-ին և 2-րդ անփոփոխ հողվածների): Արդյոք ՀՀ ՔՕ 300.1-րդ հողվածի գործողությունը փաստացի դադարել է (արարքը փաստացի ապաքրեականացվել է կամ այդ ՔՕ-ի հողվածը հակասահմանադրական է), եթե բլանկետային դիսպոզիցիայի մեջ նշված 2005թ. Սահմանադրության **կոնկրետ հողվածները** ուժը կորցրել են, իսկ ՀՀ ՔՕ 300.1-րդ հողվածը չի համապատասխանեցվել 2015թ. Սահմանադրությանը:

Քրեական իրավունքի դոկտրինում¹⁸, ինչպես նաև ՀՀ և ՌԴ բարձր դատարանների պրակտիկայում ընդունված է, այն մոտեցումը, որ բլանկետային դիսպոզիցիաներում հղում կատարված նորմերի փոփոխությունը կարող է հանգեցնել արարքի փաստացի ապաքրեականացմանը: ՀՀ սահմանադրական դատարանը նույնպես նշել է, որ նորմատիվ իրավական ակտերը, որոնց վրա կատարվում կամ ենթադրվում է հղում քրեաիրավական բլանկետային նորմով, էապես ազդում է հանցանքի իրավական բովանդակության և այդ հանցանքի համար քրեական պատասխանատվության կիրառման սահմանների վրա: Այսպիսով, յուրաքանչյուր փոփոխություն այն օրենքներում, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմում, կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության ընդլայնման, նեղացման կամ **վերացման** (տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանի 16 ապրիլի 2019 թ-ի ՍԴՌ-1453 որոշումը): ՌԴ սահմանադրական դատարանը նշել է, որ արարքը կարելի է ապաքրեականացնել ոչ միայն քրեական օրենքում համապատասխան փոփոխություն կատարելով, այլև իրավունքի այլ ճյուղերի այն դրույթների գործողությունը դադարեցնելով,

¹⁷ 2009թ-ից հետո՝ 2016թ-ին իրավական տեխնիկայի նման կանոն կիրառվել է նաև ՀՀ ՔՕ 190.2 հողվածը ձևակերպելիս («Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 171-րդ հողվածի 2-րդ մասի 1-4 կետերով նախատեսված արարքներից որևէ մեկի կատարումը, որը առաջացրել է զգալի չափով վնաս...), իսկ 2017թ-ին՝ 353.1. հողվածը ձևակերպելիս («Շնտանիքում բուսության կանխարգելման, ընտանիքում բուսության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հողվածի 3-րդ մասի 1-4-րդ կետերով, ինչպես նաև 8-րդ հողվածի 5-րդ մասի 1-4-րդ կետերով նախատեսված պահանջները ... չկատարելը):

¹⁸ Քրեական իրավունքի հայ մասնագետները նշում են, որ բլանկետային նորմերում քրեաիրավական արգելքի փոփոխությունների դեպքում փոփոխվում է դրա այն մասը, որը հղում է կատարում օրենսդրության այլ նորմերին: Առանձին դեպքերում նման փոփոխությունները կարող են հանգեցնել ապաքրեականացման: Արարքի լրիվ ապաքրեականացում հնարավոր է այն դեպքում, երբ կիրառման ենթակա համապատասխան նորմատիվ իրավական ակտի համապատասխան հողվածը, մասը կամ կետն ուժը կորցրել է: Տե՛ս Վարդապետյան Ա. Բլանկետային նորմերով հանցագործությունների որակման հիմնախնդիրները // Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու. 2(2) 2018. Երևան, 2019. էջ 348:

որոնց վրա հղում էր կատարել քրեական օրենքի բլանկետային նորմը (10.07.2003թ. թիվ 720-Օ որոշում)¹⁹:

Ինչպես նշվեց, 2009թ. ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածը հղում է կատարում 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածի և 6-րդ հոդվածի 1-ին մասերի վրա վրա, սակայն 2015թ. ՀՀ Սահմանադրությունը, բացառությամբ 1-ին և 2-րդ անփոփոխ հոդվածների, շարադրվեց նոր խմբագրությամբ, իսկ նախկին Սահմանադրության 3-ից 6-րդ հոդվածները դադարեցին գործել: ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածում առայսօր փոփոխություններ չեն կատարվել և այն չի համապատասխանեցվել 2015թ. խմբագրությամբ Սահմանադրության հոդվածների կառուցվածքին:

Նման իրավիճակում կարելի է ողջամտորեն կասկածի տակ դնել ՀՀ Սահմանադրության 3-ից 6-րդ հոդվածների հղման մասով ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի գործողության (սահմանադրականության) հարցը: Ավելին կարելի է նույնիսկ պնդել, որ օրենսդիր մարմինը, 2015թ-ից հետո դրսևորելով հակասահմանադրական անգործություն, կա՛մ ստեղծել է ՀՀ ՔՕ-ին 300.1-րդ հոդվածի անվավերության վիճակ կա՛մ ըստ էության ապաքրեականացրել է ՀՀ Սահմանադրության 3-ից 6-րդ հոդվածների մասով սահմանադրական կարգը տապալելու արարքները:

Ի հարկե, կլինեն իրավաբաններ, ովքեր կնշեն, որ 2005թ. և 2015թ. Սահմանադրությունների 3-ից 6-րդ հոդվածներում բովանդակային փոփոխություն չի կատարվել, ուստի արարքների ապաքրեականացման մասին խոսելն անհիմն է: Իրոք, 2005թ. Սահմանադրության վերաբերելի նորմերը որոշ չափով վերարտադրվել են 2015թ. Սահմանադրության մեջ (թեև առկա են նաև բովանդակային տարբերություններ, տե՛ս հավելվածը): Այս հարցը մենք չէինք բարձրացնի և չէինք քննարկի, եթե չլիներ ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի դիսպոզիցիայի sui generis կառուցվածքը: Եթե օրինակ՝ ՔՕ 300.1-րդ հոդվածի դիսպոզիցիան շարադրվեր՝ «իրավական, ժողովրդավարական պետության մասին սահմանադրական դրույթը փաստացի դադարեցնելը ...» եղանակով, ապա Սահմանադրության խմբագրության և հոդվածների համարակալման փոփոխությունը նշանակություն ունենալ չէր կարող: Մինչդեռ ունենք ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի դիսպոզիցիայի լիովին այլ շարադրանք, ինչի հետ չի կարելի հաշվի չնստել:

Բարձրացված հարցը անբովանդակ ֆորմալիզմի տիրույթում չէ, քանի որ քրեաիրավական նորմերի ձևակերպման տեխնիկան չի կարող չազդել նորմի կիրառման վրա: Նույնիսկ եթե վերացարկվենք քրեաիրավական նորմերի ձևի և բովանդակության դիալեկտիկական անխզելիության պահանջից, և հիմք ընդունենք այն մոտեցումը, որ 2005թ. և 2015թ. Սահմանադրության վերաբերելի նորմերի միջև բովանդակային առումով տարբերություն չկա, ապա, միննույնն է, քննիչը կանգնում են ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի կիրառման՝ ստորև նշված մեկ այլ բնույթի անորոշության առջև:

(c) Արարքի կատարման պահին գործող, սակայն մեղադրանք առաջադրելու ժամանակ չգործող Սահմանադրության վկայակոչումը: Եթե պայմանականորեն ընդունենք, որ վերը նկարագրված իրավիճակը որևէ կերպ չի նշանակում արարքի փաստացի ապաքրեականացում, ապա միննույնն է՝ անորոշ է մնում այն հարցի պատասխանը, թե քննիչը ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածը կիրառելիս ո՞ր խմբագրությամբ Սահմանադրության վրա պետք է հղում կատարի:

ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի կառուցվածքի պարագայում քննիչն անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ պետք է հստակ նշի, թե ՀՀ Սահմանադրության ո՞ր համարի հոդվածի տապալման մեջ է անձը մեղադրվում (կրկին նշենք, որ այս պահանջը բխում է ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի կառուցվածքից): Եթե 2005թ. խմբագրությամբ Սահմանադրությունը ուժը կորցրել է, իսկ օրենսդիրը ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի հղումները չի համապատասխանեցրել նոր խմբագրությամբ Սահմանադրության կառուցվածքին, ապա քննիչը հայտնվում է դժվարին վիճակում՝ նա պետք է վկայակոչի կա՛մ չգործող Սահմանադրության հոդվածները, կա՛մ էլ նոր

¹⁹ Пикуров Н. И. Квалификация преступлений с бланкетными признаками состава. Монография. М.: Российская академия правосудия, 2009. С. 155-156.

Սահմանադրության այն հոդվածները, որի՝ առնվազն կառուցվածքը չի համապատասխանում ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածում նախատեսված համարակալմանը: Օրինակ՝ ընտրական իրավունքի սկզբունքները 2005թ. Սահմանադրությամբ նախատեսված էր 4-րդ հոդվածում, իսկ 2015թ. Սահմանադրության 7-րդ հոդվածում, ընդ որում՝ 7-րդ հոդվածը նախատեսված չէ ՔՕ 300.1-րդ հոդվածի հղումներում: Քրեաիրավական տեսանկյունից քննիչը չի կարող հղում կատարել Սահմանադրության 7-րդ հոդվածի վրա (եթե նույնիսկ 2005թ. Սահմանադրության 4-րդ և 2015թ. Սահմանադրության 7-րդ հոդվածների բովանդակությունները իդենտիկ են), քանի որ այն նախատեսված չէ ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի դիսպոզիցիայում: Նման կարգավորումները իրավակիրառողի համար ստեղծում են անորոշության վիճակ:

Թերևս նշվածով կարելի է բացատրել քրեաիրավական մտածողությանը օտար այն վիճակը, երբ քննիչը՝ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ հարկադրված է հղում կատարել ենթադրյալ արարքը կատարելու պահին գործող (2005թ.), սակայն անձին մեղադրանք առաջադրելու պահին այլևս չգործող Սահմանադրության հոդվածներին: Ի դեպ, հայկական քրեական իրավունքում ընդունված չէ անձին որպես մեղադրյալ ներգրավելու որոշման մեջ կամ դատավճռում կիրառել (վկայակոչել) այդ պահին չգործող, սակայն արարքի կատարման պահին գործող նորմատիվ ակտի հոդվածը: Նման իրավիճակներում գործնականում միշտ կատարվում է օրենքի հին և նոր հոդվածների համապատասխանեցում և դատավարական որոշում կայացնելիս կիրառվում է նոր հոդվածը՝ այնքանով, որքանով չի խախտվում խստացնող օրենքի հետադարձ ուժի արգելքը²⁰:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի հետադարձ ուժի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը և «Venire contra factum proprium» սկզբունքը

Հայաստանում ներկայումս արդիական է ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի հետադարձ ուժի հարցը: Կարծում եմ, որ այն պետք է քննարկել ոչ թե արստրակտ ֆորմալ-իրավաբանական տեսանկյունից (ինչը ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի իրավական անորոշության պայմաններում բավականին բարդ և խճճված հարց է), այլ իրավական ռեալիզմի հարթությունում: Պետք է պարզել, թե ՀՀ-ը ինչպիսի՞նք դիրքորոշում (պրակտիկա) է ունեցել ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածը մինչև 2009թ. տեղի ունեցած դեպքերով կիրառելու վերաբերյալ:

3.1. Պետության նկատմամբ վստահության պաշտպանության սահմանադրական սկզբունքը

Եթե կոնկրետ գործով պետությունը քրեաիրավական հարցի վերաբերյալ արտահայտել է հստակ դիրքորոշում և տևական ժամանակ պահպանել ու կիրառել է այն, ապա «Venire contra factum proprium» սկզբունքի ուժով նա հետագայում չպետք է հակասի սեփական գործողություններին կամ հերքի իր գործողությունների հետևանքները: Օրինակ՝ եթե պետությունը կոնկրետ փաստական հանգամանքների պարագայում հստակորեն և հետևողականորեն հրաժարվել է անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուց, ապա «Estoppel»-ի ուժով զրկվում է հատկապես նույն կամ նմանատիպ փաստական իրավիճակներում մեկ այլ անձի նկատմամբ քրեաիրավական պահանջ ներկայացնելու հնարավորությունից՝ քանի դեռ պաշտոնապես չի հաստատվել նախկինում արտահայտված դիրքորոշման ոչ իրավաչափությունը կամ նորմատիվ-փաստական հիմքերի փոփոխությունը:

Քրեական արդարադատության ոլորտում պետության նկատմամբ վստահության պաշտպանության սահմանադրական սկզբունքը էապես կվնասվի, եթե ՀՀ-ն հստակ և հասկանալի կերպով չներկայացնի միևնույն իրավական հարցի վերաբերյալ պետական դիրքորոշման փոփոխության պատճառը:

²⁰ ՀՀ ՔՕ 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

3.2. Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի հետադարձ ուժի վերաբերյալ

3.2.1. ՀՀ ազգային ժողովի (պատգամավորների) դիրքորոշումը: Դեռևս 2009թ. ՀՀ ազգային ժողովում ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխության վերաբերյալ Նախագիծը քննարկելիս պատգամավորները բարձրացրել են այն հարցը, թե ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխությունը ինչ ազդեցություն կունենա 2008թ. մարտի մեկի դեպքերով «7-ի գործ» վրա: ՀՀ ազգային ժողովի պետաիրավական հարցերի հանձնաժողովի նախագահի տեղակալը հստակ նշել է, որ՝ 1) Օրենսդրական այս փոփոխությունների առիթը եղել է «7-ի» գործը. 2) ԱԺ նախագահը Եվրախորհրդի խորհրդարանական ժողովի ներկայացուցիչներին նման օրենսդրական փոփոխություններ կատարելու խոստումը էր տվել:

Ազգային ժողովի պատգամավոր Վ. Դալլաբյանը նշել է.

«Պրն Հարությունյանը (ՀՀ ազգային ժողովի պետաիրավական հարցերի հանձնաժողովի Նախագահը՝ Ա.Ղ.) հայտարարեց, որ օրենքի ընդունումից հետո գլխավոր դատախազը պարտավոր է վերաորակել մեղադրանքները: Այսինքն՝ մեծ հաշվով այդ ամենն ուղղակիորեն կապված է «7-ի գործով» դատավարության հետ»²¹:

ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխությունը նախաձեռնել էր ՀՀ գործադիր իշխանությունը և այն հաստատվել էր ՀՀ օրենսդիր իշխանության կողմից: Պետական իշխանության բարձրագույն մարմիններում քննարկվել և, փաստացի ընդունվել էր, որ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխության դեպքում ՀՀ ՔՕ նոր հոդվածը չի կարող կիրառվել մինչ այդ տեղի ունեցած դեպքերով:

3.2.2. Ընդդիմադիր պատգամավորի կանխատեսումը և ճակատագրի հեզնանքը: ՀՀ ազգային ժողովի 2009թ. փետրվարի 25-ին, երբ քննարկվում էր ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխության հարցերը, ընդդիմադիր պատգամավոր Զ. Փոստանջյանը (իրավաբան) զեկուցողներին հարց է տվել (որը պարունակում էր նաև պնդում) այն մասին, թե ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածում փոփոխություն կատարելու դեպքում նոր հոդվածն արդյոք կարող է կիրառվել, եթե պարզի, որ պետական իշխանությունը բռնությամբ պահել են երկրորդ Նախագահի և պետության մյուս ներկայացուցիչները:

Պատգամավորների հարցը ու պատասխանը մեջբերենք ՀՀ ազգային ժողովի նիստի թիվ 110 արձանագրության սղագրությունից.

«Զ.ՓՈՍՏԱՆՋՅԱՆ

-Պրն Շահբազյան, չե՞ք կարծում, եթե այս ՀՀ ՔՕ 300 հոդվածը փոխվի (...) և եթե 7-ի գործով մեկ այլ գործ էլ հարուցված և պարզվի, որ բռնությամբ պետական իշխանությունը պահել են նախկին իշխանությունները՝ ի դեմս Ռոբերտ Քոչարյանի, և պետության ներկայացուցիչներն են կրակել ժողովրդի վրա, մենք դա գիտենք բոլորս, որոնցից 3-ը զոհվել են «Չերյոմուխա 7»-ից, եթե նրանց վրա քննությունը է տարվում այնպես, որ նրանք էլ մեղադրյալների աթոռին պետք է նստեն, իսկ իմ խորին համոզմամբ, դա այդպես է, այդ դեպքում այս հոդվածը չի գործելու: Ի՞նչու եք պատասխանատվությունից ցանկանում ազատել այդ մարդկանց: Ի՞նչ եք կարծում, կարող է այսպիսի իրավիճակ ստեղծվել:

Ա.ՇԱՀԲԱԶՅԱՆ

-Տիկին Փոստանջյան, իսկապես...

Ա.ՊԵՏՐՈՍՅԱՆ

-Պրն Շահբազյան, կներեք, մենք ունենք վարման կարգի հետ կապված հայց:

Խնդրեմ, պրն Հարությունյան:

Դ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

-Հարգելի նախագահող, պրն Շահբազյանը ներկայացնում է հանձնաժողովի կարծիքը: Հարցերը, որ հնչում են, անձնական հարցեր են, այսինքն՝ պատգամավոր Շահբազյանին է ուղղված: Հանձնաժողովն այդ հարցերի վերաբերյալ, որ հնչում են դահլիճում, որևէ դիրքորոշում չի արտահայտել: Ես կարծում եմ, պատեհ չէ, նման

²¹ՀՀ ազգային ժողովի 4-րդ գումարման 5-րդ նստաշրջանի 2009թ. փետրվարի 25թիվ 110 արձանագրության սղագրություն: <http://parliament.am/transcript.php?AgendaID=1812&day=25&month=02&year=2009&lang=arm#25.02.2009>

Այս մեջբերումից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները՝

Առաջին՝ դեռևս 2009թ. ընդդիմադիր պատգամավորն ըստ էության պնդում է կատարել այն մասին, որ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածում փոփոխություններ կատարելու դեպքում նոր ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի չի կարող կիրառվել Մարտի մեկի գործով: Մասնագիտությամբ իրավաբան պատգամավորը հարց-պնդում է կատարել՝ «Ինչու էք այդ մարդկանց ցանկանում ազատել պատասխանատվությունից»:

Երկրորդ՝ ՀՀ ազգային ժողովի պետաիրավական հարեցրերի հանձնաժողովի նախագահը և տեղակալը (համազեկուցողներ) ըստ էության չեն հերքել պատգամավորի հարց-պնդումը:

3.2.3. ՀՀ դատախազության դիրքորոշումը և դրա փոփոխությունը: ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի հետադարձ ուժի վերաբերյալ ՀՀ դատախազությունը, հետևելով օրենսդիր և գործադիր իշխանության դիրքորոշմանը, 2009թ. արտահայտել է մի դիրքորոշում, սակայն՝ 2018թ-ին ձևավորեց դրան հակասող դիրքորոշում: Այսպես՝ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխության հետևանքով «7-ի գործով» դատախազները 2009թ. մարտի 31-ին որոշում են կայացրել ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի 1-ին մասով քրեական մեղադրանքից հրաժարվելու մասին, հետևյալ հիմնավորմամբ. «ՀՀ ազգային ժողովը 2009թ. մարտի 18-ին ընդունված օրենքով ըստ էության սահմանվել են հանրորեն վտանգավոր արարքի նոր հանցակազմեր: Նկատի ունենալով, որ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի, ուստի ամբաստանյալի նկատմամբ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդումը ենթակա է դադարեցման»:

2018թ-ի հեղափոխությունից հետո երկրորդ Նախագահի դեմ հարուցված գործով ՀՀ դատախազությունը հրաժարվել է ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի հետադարձ ուժի վերաբերյալ՝ տևական ժամանակ (2009թ-ից) անփոփոխ մնացած պետական դիրքորոշումից: Դիրքորոշման փոփոխությունը բացատրելու նպատակով ՀՀ գլխավոր դատախազը նշում է, որ չկա պատճառաբանություն, թե 2009թ. դատախազությունը ինչու է նախկին ընդդիմադիր գործիչների նկատմամբ հետապնդումը դադարեցրել: «Որոշման մեջ (հետապնդումը դադարեցնելու՝ Ա.Ղ.) ասված է, որ այդ գործիչներին մեղադրանք է առաջադրվել ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածով և գրված է, որ ՀՀ ազգային ժողովը 2009 թվականին սահմանել է նոր հանցակազմեր, այնուհետև որոշման մեջ պարզապես վկայակոչվում է ՀՀ ՔՕ 13-րդ հոդվածը (ՀՀ ՔՕ գործողությունը ժամանակի մեջ): ՀՀ գլխավոր դատախազը նշում է, որ քրեական հետապնդումը դադարեցնելու որոշման մեջ որևէ պատճառաբանություն բերված չէ²³:

ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի հետադարձ ուժի հարցում ՀՀ դատախազության դիրքորոշման կտրուկ փոփոխության պատճառաբանությունը համոզիչ չէ առնվազն այն հիմնավորմամբ, որ 2008-2018թթ. տարիների ընթացքում նշանակվել են երեք գլխավոր դատախազներ և նրանցից որևէ մեկն այս տարիների ընթացքում չի անդրադարձել 2009թ-ին նախկին ընդդիմադիր քաղաքական գործիչների նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճառաբանության բացակայությանը, հանրայնորեն չի քննարկել անգամ այդ որոշումը վերացնելու անհրաժեշտության և (կամ) հնարավորության (անհնարիության) հարցը: Կարելի է եզրակացնել, որ երեք գլխավոր դատախազները տևական ժամանակ լռությամբ համաձայնվել են (Tacitus consensus) այդ որոշման մեջ արտացոլված պաշտոնական դիրքորոշման հետ: Ընդ որում, ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի հետադարձ ուժի խնդիրը, նկարագրվող իրավիճակում, բացառապես իրավական հարց էր, ուստի դատախազության

²²ՀՀ ազգային ժողովի 4-րդ գումարման 5-րդ նստաշրջանի 2009թ. փետրվարի 25թիվ 110 արձանագրության սղագրություն: <http://parliament.am/transcript.php?AgendaID=1812&day=25&month=02&year=2009&lang=arm#25.02.2009>

²³<https://www.azatutyun.am/a/29946813.html> (12.08.2019).

դիրքորոշման փոփոխությունը չէր կարող արդարացվել նաև գործի փաստական հանգամանքների փոփոխությամբ:

Մինևույն ժամանակ, կրկին նշենք, որ ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածը հետադարձ կարգով, մինչև այդ ընդունված դեպքերի վրա կիրառելու անթույլատրելիությունը ոչ թե պարզապես դատախազների դիրքորոշումն է, այլ պետության դիրքորոշումն է:

Իրավական ողջամտությունը պահանջում է, որ եթե մի գործով պետականորեն ճանաչվել է ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի հետադարձ կարգով կիրառելու անթույլատրելիությունը, ապա այդ նույն մոտեցումը պետք է կիրառել այլ դեպքերի կամ անձերի նկատմամբ:

4. Եզրահանգումներ

1) ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխությամբ հստակեցվեց Սահմանադրական կարգի այն հիմունքները (1-ից 6-րդ հոդվածները), որոնց դեմ ոտնձգությունը կարող է համարվել սահմանադրական կարգի տապալում: Դրան զուգահեռ՝ օրենսդրական փոփոխության հետևանքով սահմանադրական կարգի տապալումը կտրվեց իշխանությունը յուրացնելու հանցակազմից և վերացվեց սահմանադրական կարգը **բռնությամբ** տապալելու եղանակը, որի պայմաններում էապես փոխվեց նոր հանցակազմի էությունը, այն ընդգրկեց գործողության այն աստիճանի լայն շրջանակ, որը վտանգում է այս հանցակազմի իրավական որոշակիությունը:

ՀՀ ՔՕ 300.1-րդ հոդվածի՝ հակասահմանադրականության աստիճանի իրավական անորոշությունը պայմանավորված է երեք փոխկապակցված գործոնով՝

Ա. սահմանադրական կարգի տապալումը իշխանությունը յուրացնելու հանցակազմի կոնտեկստից կտրելը.

Բ. սահմանադրական կարգը տապալելու բռնի եղանակը վերացնելը և, դրանով իսկ, կատարման եղանակներն ընդլայնելը.

Գ. ՀՀ ՔՕ 300.1-րդ բլանկետային դիսպոզիցիայում թվարկված 2005թ. Սահմանադրության **կոնկրետ հոդվածները** 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությանը չհամապատասխանեցնելը:

2) ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխությունը նախաձեռնել էր ՀՀ գործադիր իշխանությունը և այն հաստատել էր ՀՀ օրենսդիր իշխանությունը: Պետական իշխանության բարձրագույն մարմիններում քննարկվել և, փաստացի, ընդունվել է, որ ՀՀ ՔՕ 300-րդ հոդվածի փոփոխության դեպքում ՀՀ ՔՕ նոր հոդվածը (300.1-րդ հոդվածը) չի կարող կիրառվել մինչ այդ տեղի ունեցած դեպքերով: Այս մոտեցումը ոչ թե պարզապես դատարանում մեղադրանք պաշտպանող դատախազների դիրքորոշումն է, այլև ՀՀ-ի պետականորեն կայուն ձևավորված դիրքորոշումն է:

3) ՀՀ քր. օր-ի 300.1-րդ հոդվածի համակարգային դեֆեկտների, իրավական որոշակիության խիստ ցածր աստիճանի և հակասահմանադրական լինելու խիստ բարձր հավանականության խորապատկերում կարելի է քննարկել ՀՀ-ում իրավապահ մարմինների կողմից սահմանադրական կարգը տապալելու մասին տարբեր առիթներով ներկայացված հաղորդումների վերաբերյալ քրեական գործեր հարուցելուց (քրեական վարույթ նախաձեռնելուց) և քննություն կատարելուց խուսափելու պրակտիկան: